



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

22 հունիսի 2021 թվական

6-ԴՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ԴՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 17.00

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է
ավագանու 5 անդամ՝

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սերգեյ Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Ազատության հրապարակում հայտնվել
են վարձակալությամբ տրվող տարատեսակ ատրակցիոններ, բատուտներ, անհասկանալի
տանձիկներ, մանկական հեծանիվներ, ավտոմեքենաներ: Հարցը բազմիցս բարձրաձայնվել է

այս ամբիոնից, և վերջերս Ձեզ դիմել էի վերջնականապես հասկանալու և նշված անհասկանալի երևույթը կարգավորելու խնդրանքով: Մասնավորապես ուզում եմ խոսել ոչ միայն տարբեր երևանքների կողմից հնչող բողոքների մասին, որ Ազատության հրապարակը դարձել է անանցանելի, այլ այն, որ տարածքը կորցրել է իր տեսքը՝ որպես Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և Բալետի ազգային ակադեմիական թատրոնի շրջակա միջավայր, այնինչ մայրաքաղաքում ամեն հատված պետք է ծառայի իր նշանակությանը: Իմ գրությանն ի պատասխան տեղի է ունեցել աշխատանքային ծավալուն քննարկում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ: Ես տեղեկացա, որ շահագործողների հետ պայմանագրեր կնքված չեն եղել, չկան համապատասխան թույլտվություններ, և այս ամենը վկայում է այն մասին, որ նրանց գործունեությունն ապօրինի է: Ես առաջարկել եմ այլընտրանքային տարբերակներ նրանց գործունեությունը կազմակերպելու համար, օրինակ՝ Վ. Մամիկոնյանի արձանի հարակից տարածքում կամ «Օղակաձև» զբոսայգում: Կարելի է առաջարկել նաև այլ վայրեր, որոնք կարող են քաղաքացիների համար լինել հանգստի վայրեր: Ես հուսով եմ, որ նշված հարցն այս դահլիճում մենք այլևս չենք քննարկի, այլ ուղղակի կփաստենք, որ այն լուծվել է, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը:

Ավետ Պողոսյան

-Շնորհակալություն, միանգամից տեղեկացնեմ, որ ս.թ. հուլիսի 1-ից մեր լիազորությունների շրջանակներում Ազատության հրապարակում չի տրամադրվելու որևէ կանոնակարգված գործունեության թույլտվություն: Ցավոք, մենք ունենք վերահսկողական մեխանիզմներ կիրառելու շատ սուղ իրավական գործիքակազմ, և ես պատրաստակամություն եմ հայտնում պարոն քաղաքապետի և պարոն Անտոնյանի հետ համատեղ մասնակցելու այդ գործիքակազմի մշակմանը, անհրաժեշտության դեպքում լիցենզավորման, վայրի տրամադրման կարգ սահմանելու համար օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու գործընթացին: Սակայն ուզում եմ ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ քաղաքի ավագանին իր լիազորությունների շրջանակում ոչ թե առանձին դեպքի մասին պետք է բարձրաձայնի, այլ այդ առանձին դեպքի արդյունքում

ստեղծված խնդիրը վեր հանի և օրենսդրական նախաձեռնություններով համակարգային լուծումներ գտնի:

Հայկ Մարության

-Պարոն Պողոսյան, համակարգային լուծումների գտնելուն համաձայն եմ, սակայն կան նշանավոր վայրեր, և, անհրաժեշտության դեպքում, պետք է առանձին անդրադառնալ այդ վայրերին: Գործիքակազմ կա, թե չկա, եկեք դա դարձնենք ներքին քննարկման թեմա: Ճիշտ է, օրենքում կան բացթողումներ, բայց կարծում եմ ցանկացած դեպքում կարելի է ելք գտնել:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի վերաբերյալ է: Ինչքանով տեղյակ եմ, այն օրվա ցանկացած ժամի, հիմնականում, թերբեռնված է լինում: Առաջարկում եմ, որպեսզի հարակից և շատ մոտ փողոցներում ուղղակի արգելվի ավտոկայանումը, հակառակ դեպքում այդ կայանատեղիի իմաստը ես չեմ տեսնում: Այսինքն մենք տվել ենք մեր քաղաքացիներին հնարավորություն իրենց մեքենաների կայանման համար, բայց դա առնվազն պետք է նպաստի, որպեսզի հարակից փողոցները բեռնաթափվեն: Ուստի առաջարկում եմ քննարկումներ սկսել նշված հարցի վերաբերյալ, թե որ փողոցներում է պետք փուլային տարբերակով արգելել ավտոմեքենաների կայանումը և վարորդներին ուղղորդել դեպի ստորգետնյա ավտոկայանատեղի:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Անտոնյան: Եթե մեր գործընկերները կարողանան այդ հարակից փողոցներում ապահովել ավտոմեքենաների ճիշտ կայանումը (կարմիր գծեր, երկրորդ շարք և այլն), վստահ եմ, որ նման խնդիր չի լինի: Ասեմ, որ ստորգետնյա ավտոկայանատեղիում 100 տոկոսանոց տեխնիկական վերազինումից, գործընթացները ավտոմատացնելուց հետո, զրեթե երկու անգամ ավելի շատ գումար է փոխանցվել համայնքի բյուջե, և ես չեի ասի, որ ավտոկայանատեղին թերբեռնված է լինում, հատկապես տարվա այն ամիսներին, երբ զբոսաշրջիկները շատ են քաղաքում:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան, խնդրեմ:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է Նորք-Մարաշ վարչական շրջանի Երևանի Արգիշտի Առաջին արքայի անվան հ.61 հիմնական դպրոցին: Բազմաթիվ ներքին խնդիրներից բացի պարզվում է, որ դպրոցը մոտ 8 տարի է չունի կոյուղագիծ: Զարմանում եմ, թե ինչպես կարելի է 21-րդ դարում նման փաստի առաջ կանգնել: Ցանկանում եմ ճշտել, մենք ունենք արդյոք նման այլ դպրոցներ և կարո՞ղ ենք արդյոք կոնկրետ այս հարցին հրատապ լուծում տալ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար Էդմոնդ Ղազարյանը, խնդրեմ:

Էդմոնդ Ղազարյան

-Շնորհակալություն, այս պահին «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տեխնիկական պայմանն արդեն տրված է՝ այնտեղ պետք է կառուցվի մոտ 600 գծամետր երկարությամբ կոյուղագիծ, սակայն դա մեծ ֆինանսական ներդրում է պահանջում, ինչը վարչական շրջանի, ինչպես նաև քաղաքապետարանի բյուջեով նախատեսված չէ: Այժմ քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ պարոն Կարոյանի հետ աշխատանքներ ենք իրականացնում՝ ֆինանսական միջոցների հայթայթման ուղղությամբ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, տիկին Մելքոմ Մելքոմյան, եթե ավելացնելու բան ունեք, խնդրեմ:

Գայանե Մելքոմ Մելքոմյան

-Շնորհակալություն, այո՛, մենք էլի ունենք դպրոցներ, որոնք ունեն կոյուղագծի խնդիր, ունենք դպրոցներ, որոնց նկուղային հարկերում կոյուղաջրեր են լցվում, ինչպես նաև ունեն բազմաթիվ շենքային և կոմունալ հարցեր: Քանի որ դպրոցների շենքերը պատկանում են Պետական գույքի կառավարման կոմիտեին, համայնքային բյուջեից դրանց վրա գումարներ ծախսելու իրավունք մենք չունենք, բայց այդ հարցը մեր ուշադրության կենտրոնում է: Բազմիցս գրավոր դիմել ենք բոլոր պատկան մարմիններին և կօգտագործենք ցանկացած հնարավորություն հրատապ լուծումներ տալու համար:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, ասեմ, որ բազմիցս դիմել ենք ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ կառավարության կողմից սպասում ենք լուծումների:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկրորդ հարցս վերաբերում է «Երևանտրանս» ՓԲԸ-ին: Ինձ անհանգստացնում է այնտեղ տեղակայված տեխնիկայի անմխիթար վիճակը: Ճիշտ է, նոր տնօրենի՝ Արմեն Բեգունյանի նշանակումից հետո ես բավականաչափ փոփոխություն եմ տեսնում, այնուամենայնիվ, հարցը մնացել է մի փոքր չլուծված: Կցանկանայի իմանալ քաղաքապետարանում ո՞վ է վերահսկում և ո՞վ է պատասխանատու այդ տեխնիկայի համար:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Այո՛, բավական երկար ժամանակ է՝ 2020թ. փետրվարի 7-ից, անձամբ զբաղվում եմ Երևան համայնքին պատկանող ավտոմեքենաների հաշվառման, դրանց փաստաթղթերի վերականգնման հարցերով: Տարբեր վարչական շրջաններում, տարբեր մասնավոր կազմակերպություններում կանգնած ավտոմեքենաները հավաքագրվել են և ամբողջությամբ տեղակայվել «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքում: 2020թ. վերջին հայտարարվել էր մրցույթ, որպեսզի լիցենզավորված կազմակերպության կողմից իրականացվեր այդ ավտոմեքենաների գնահատում և համապատասխան տեղեկանքների տրամադրում, որով հնարավոր կլիներ այդ մեքենաների՝ աճուրդային կարգով օտարումը: Այդ գործընթացը տարբեր պատճառներով հետաձգվել էր, սակայն այժմ վերսկսվել է: Հուսով եմ, որ այն կազմակերպությունը, որը հաղթել էր մրցույթում, ամբողջությամբ կկատարի իր պարտականությունները, և հնարավորություն կունենանք աճուրդ հայտարարել և օտարել այդ մեքենաները: Այնտեղ կան նաև ավտոմեքենաներ, որոնց սեփականատերը «Երևան» հիմնադրամն է: Երկու ամիս առաջ նախատեսվել էր վերջինիս գույքը նույնպես գույքագրել ու իրականացնել հաշվապահական ձևակերպումներ և այն փոխանցել վարչական շրջաններին կամ համայնքին: Դրանցից պիտանիները կօգտագործվեն, իսկ ոչ պիտանիները նույնպես աճուրդի միջոցով կօտարվեն: Այդ աշխատանքն իրականացվում է նաև քաղաքապետարանի

ենթակայության կազմակերպություններում: Օրինակ՝ «Երբաղույս» ՓԲԸ-ում 2020թ-ին դուրս է գրվել 8 ավտոմեքենա, ևս 3-ը նախատեսվում է դուրս գրել այս տարի, «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ում կար 15 ավտոմեքենա, այս պահի դրությամբ վաճառվել է 3-ը, մնացած 12-ը նույնպես դրվել է վաճառքի, քանի որ տարեկան մոտ 10 մլն դրամ գումար էր ծախսվում այդ ավտոմեքենաների վերանորոգման համար: Այսինքն՝ իրականացվում է ավտոմեքենաների թարմացում և օպտիմիզացում: Կարծում եմ 2021 թվականին կհաջողվի ամբողջությամբ ավարտել այդ գործընթացը: Այդ տեխնիկական միջոցների տնօրինման և պատասխանատուի հարցն այս պահին քննարկման փուլում է և առաջիկայում պարզ կլինի:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, հարցս կապված է այն հանձնաժողովների աշխատանքի հետ, որոնք քննարկում են Երևան համայնքին պատկանող հողերի և անշարժ գույքի օտարման հարցերը: Ես այդ հանձնաժողովներից մեկի անդամ եմ: Ինձ հետաքրքիր է, թե ինչ տրամաբանությամբ և մոտեցումներով են Երևան համայնքին պատկանող հողերը և անշարժ գույքը օտարվում կամ դրվում աճուրդի:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, քաղաքականությունը հետևյալն է. լավագույն տարբերակն այն է, որ համայնքին պատկանող հողատարածքներն օգտագործվեն, սակայն, բնականաբար, համայնքը չունի այդքան ուժ և ֆինանսական միջոցներ, որպեսզի զբաղվի, օրինակ, բնակարանաշինությամբ կամ նմանատիպ այլ գործունեությամբ: Նման դեպքերում քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հետ համատեղ, մշակում են ընդհանուր պլան և համապատասխան ճարտարապետահատակագծային առաջադրանքով հողը դրվում է աճուրդի: Գնորդն այդպիսով տեղյակ է լինում, թե ինչ բիզնես պլան կարող է ունենալ այդ հողատարածքի հետ կապված: Օտարումը կատարվում է ըստ դիմումների, որոնք քննարկվում են, գործընթացը, ցավոք սրտի, մի քիչ երկար է տևում, այնուհետև կայանում է աճուրդ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հաջորդ հարցս վերաբերում է <<Կանազ>> մշակույթի կենտրոնին, որը 2017թ-ից 10 տարով տրված է անհատույց օգտագործման՝ հատուկ պայմաններով, տարեկան ներդրումային ծրագրով: Ինձ հետաքրքրում է, թե ի՞նչ աշխատանքներ են այնտեղ կատարվել մինչ օրս, իսկ, եթե չեն կատարվել, ապա ինչպիսի՞ գործողություններ պետք է ձեռնարկվեն մեր կողմից:

Հայկ Մարություն

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը, խնդրեմ:

Սերգեյ Ներսեսյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան, ես այս պահին տեղեկատվություն չունեմ հարցի վերաբերյալ, սակայն ավելի ուշ կարող եմ մանրամասն տեղեկանք տրամադրել Ձեզ, ինչպես նաև հանրությանը տեղեկացնել կատարված ներդրումների վերաբերյալ:

Հայկ Մարություն

-Շնորհակալություն, հարցի վերաբերյալ պարզաբանում կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը, խնդրեմ:

Գարեգին Խաչատրյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան, համապատասխան գրություն է ուղարկվել տնտեսվարողին, որպեսզի հաշվետվություն ներկայացվի պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման մասով՝ հասկանալու համար, թե որ պարտավորություններն են կատարվել և որոնք՝ ոչ: Իհարկե ներկայացվել են օբյեկտիվ պատճառներ որոշակի պարտավորություններ չկատարելու համար, հարցը նաև քննարկվել է քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում՝ քաղաքապետի խորհրդական Դավիթ Ճգնավորյանի գլխավորությամբ: Գործընթացն սկսված է, արդյունքների մասին կտեղեկացվի երկու օրից:

Հայկ Մարություն

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սերգեյ Սարգսյան, խնդրեմ:

Մերգեյ Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Առաջին հարցս անուղղակիորեն առնչվում է քաղաքացիների առողջությանը և անվտանգությանը: Ի՞նչ լրացուցիչ միջոցներ կարող է ձեռնարկել Երևանի քաղաքապետարանը, որպեսզի բոլոր կանգառները մաքրվեն այնտեղ կայանած ավտոմեքենաներից, հեշտացվի տրանսպորտի մոտեցումը կանգառներին և ինչպե՞ս կարելի է Երևան քաղաքի ճանապարհների գծանշումները կատարել ավելի վառ գույներով, քան այժմ է:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, այժմ քննարկումներ են ընթանում քաղաքապետարանի և ՀՀ կառավարության միջև՝ նշած գործառույթները համայնքին փոխանցելու նպատակով: Մեր դիրքորոշումն այն է, որ մենք դեմ չենք դրան, սակայն այդ ծառայությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար մեզ անհրաժեշտ են գումարներ: Օրինակ, որպեսզի այդ գծանշումները լինեն որակյալ և երկար ծառայեն, պետք է կատարվեն ավելի թանկ տեխնիկական միջոցներով և նյութերով: Իհարկե, եթե դա իրականացնի քաղաքապետարանը, դա կանի ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ, որը ճիշտ տարբերակ է, սակայն, քանի դեռ ֆինանսավորման հետ կապված քննարկումներ են ընթանում, այդ գործառույթն իրականացնելու է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը:

Մերգեյ Սարգսյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է դիտահորերի ծրագրին, ի՞նչ ընթացքի մեջ է այն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, ասեմ, որ մրցույթը կայացել է, հաղթող կազմակերպությունը հրաժարվել է պայմանագիրը ստորագրելուց, այն շնորհվել է երկրորդ մասնակցին: Նախորդ շաբաթ ստորագրվել է պայմանագիրը, արդեն իրականացվում են նախապատրաստական աշխատանքները: Կարծում եմ մոտ ժամանակներում կսկսեն դիտահորերի հարթեցման և համապատասխանեցման աշխատանքները: Ցանկանում եմ նշել, որ այդ դիտահորերը

նույնպես, հիմնականում, չեն պատկանում Երևան համայնքին, այլ տարբեր օպերատորների գույքեր են, սակայն քաղաքը պարտավորվել է դիտահորերի որոշ մասը ենթարկել փոփոխության և համապատասխանեցնել ճանապարհներին: Կարծում եմ ամեն տարի այդ ծրագիրն իրականացնելու դեպքում կգա ժամանակ, որ այլևս խնդիր չենք ունենա:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է արցախյան պատերազմում զոհվածների ոգեկոչման և հիշատակի արարողություններին: Շատ քաղաքացիներ, այդ թվում՝ զոհվածների ընտանիքներից, կարծես թե սպասում են զոհվածների հիշատակը հավերժացնող մի ընդհանուր հուշարձանի կամ նախաձեռնության: Ես ինքս գիտեմ, որ աշխատանքներ ընթանում են, սակայն, կարծում եմ, հանրությունը նույնպես պետք է տեղեկացված լինի:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, իհարկե, մեծ ծավալի աշխատանք է կատարվել, խոսքը Երևանի տարածքում կառուցվելիք անտառ-պուրակի մասին է: ՀՀ կառավարության հետ համատեղ որոշվել է Երևանի բուսաբանական այգու տարածքում հիմնել արցախյան ողջ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող անտառ-պուրակ: Միտքն առաջացել է զոհվածների հարազատների և մտահոգված քաղաքացիների հետ համատեղ քննարկումների ընթացքում: Քաղաքապետի որոշմամբ ստեղծված է աշխատանքային խումբ, որի ղեկավարն է քաղաքապետի տեղակալ Գայանե Մելքում Մելքոմյանը: Աշխատելու ենք ՀՀ կառավարության հետ համատեղ և վերջնական քննարկումներից հետո կներկայացվի հանրությանը: Քանի որ նախագիծը մեծ է լինելու, այն իրականացվելու է փուլային տարբերակով:

Սաթենիկ Մկրտչյան

-Շնորհակալություն: Հաջորդ հարցս «Եռաբլուր» զինվորական պանթեոնի մասին է, որը շատ ցավոտ թեմա է: Գիտեմ, որ «Եռաբլուր» զինվորական պանթեոնը գտնվում է ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության տակ, սակայն կցանկանայի իմանալ Երևան համայնքն իր կողմից ի՞նչ լրացուցիչ միջոցառումներ է ձեռնարկում, որպեսզի այն լինի ավելի բարեկարգ և հարմար՝ այցելուների համար:

Հայկ Մարության

-«Եռաբլուր» զինվորական պանթեոնը մշտապես գտնվում է քաղաքային իշխանության ուշադրության կենտրոնում: Այնտեղ ընթացիկ մաքրման և բարեկարգման աշխատանքներ են իրականացնում քաղաքապետարանի համապատասխան վարչությունները՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի հետ միասին: Կարծում եմ կարիք չկա այդ բոլորը մանրամասն ներկայացնելու, միայն կարող եմ ասել, որ վերջերս այնտեղ մեծ ծառատունկ է իրականացվել:

Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 5-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեց՝ Ա.Գևորգյան